

ՍՈՒԽՈՒՄԻԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂՈԹԱՏԱՆ ՕԾՈՒՄԸ

Աբխազիայի մայրաքաղաք Սուխումիի հայ համայնքի խնդրանքին սիրով ընդառաջեցին տեղի պետական պատկան մարմինները, և «Կոմիտաս» մշակութային-բարեգործական ընկերության ջանքերով այս տարի Սուխումիում հիմնվեց առաջին հայ Աղոթատունը:

Աղոթատունը գտնվում է Սուխումիի Լեչկոպ սարահարթում գտնվող հայոց Շահումյանի անվան դպրոցի սրահներից մեկում: Աղոթատան օծումը որոշված էր կատարել մայիսի 10-ին, կիրակի օրը: Օծման համար Սուխումի էր հրավիրվել Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Առաջնորդ սրբազան հայրը Սուխումի ժամանեց մայիսի 8-ին և «Հրաշափառ»-ով ընդունվեց Աղոթատուն՝ զանգերի հնչյունների ներքո: Աղոթքից հետո սրբազան հայրը քարոզ խոսեց՝ «Երանի եկեղեցի շինողաց» բնաբանով:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, դպրոցի սրահում տեղի ունեցավ խորհրդակցական ժողով-հավաքույթ՝ կազմակերպչական աշխատանքների և եկեղեցական այլ հարցերի վերաբերյալ:

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, ժամը 17-ին, տեղի ունեցավ Աղոթատան նավակատիքը: Կատարվեցին Դոնբացեքի և Հսկման արարողությունները:

Վերջում սրբազան հայրը քարոզեց և համայնքի անունից շնորհակալական խոսքով օրհնեց երկրի ղեկավարության բարի գործերը՝ ասելով. «Որչափ շատ եկեղեցիներ լինեն մի երկրում, այդքան շատ օրհնյալ կլինի այդ երկիրը»:

Մայիսի 10-ին, կիրակի օրը, ժամը 13-ին, տեղի ունեցավ Աղոթատան օծումը: Առաջնորդ սրբազան հայրը Աղոթատունը օծեց Ս. Հարություն անունով:

Այս առիթով Ս. Հարություն Աղոթատուն էին ժամանել Սուխումիից և շրջակա քաղաքներից ու գյուղերից ուխտավորների հոծ բազմություն: Պատվավոր հյուրերի առաջին շարքում էին իշխանության հարգելի ներկայացուցիչները: Ներկա էին նաև բազմաթիվ լրագրողներ, հեռուստատեսության և ռադիոյի աշխատակիցներ:

Օծման արարողությունից հետո առաջնորդ սրբազան հայրը Աստծուն նոր Տուն ընծայաբերվելու առիթով արարողությանը ներկա հոծ բազմությանը հաղորդեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնություններն ու շնորհավորանքները:

Այսպիսով, Սուխումի քաղաքը, երկարատև սպասումից հետո, օժտվեց առաջին հայ Աղոթատնով:

Նորաօծ Ս. Հարություն Աղոթատան հոգևոր հովիվ նշանակվեց համաքաղաքացի արժանապատիվ Տ. Տաթև քահանա Հարությունյանը:

Օծման կարգի ավարտից հետո, կատարվեց մատաղի օրհնություն, որին հաջորդեց ավանդական երգն ու պարը:

ԹՂԹԱԿԻՑ